Տան ներսից պատասխանում էին՝

— Կտրի՛ր։—

Երեք անգամ այսպես հարցնելուց և պատասխան ստանալուց հետո տատմերը փետուրներն ու թելը կտրատում էր երեխայի ոտների տակ։

Եթե երեխան լո̈ւսճավ ընկած էր լինում, տանում էին այդ հիվանդությունը բուժելու շնորհքը ժառանգաբար ործեցորդի ունեցող տան մեծի մոտ[77] և նրա օջախի մոտ մի արծաթ դրամ—լիսին՝ կիսալուսին, մահիկ կտրել տալիս, այդ լուսնաձև կտորի վրա կանթ շինում և կախում էին երեխայի ուսից, թևքից կամ կրծքից։ Կամը լո̈ւսճավ ընկած երեխայի շրթներին քսում էին շան լակը, իսկ մի քանի գյուղերում երեք անգամ անց էին կացնում էշի տակով։

Եթե երեխան հազում էր կյա̈պո̈տ ճա̈զա̈վ[78], նրան անց էին կացնում փէյճի՝ աղբի կույտի տակ քանդած ծակով։ Այդ ծակը քանդել էին տալիս ջուխտ երեխա բերող կնոջ։

Եթե երեխայի բերանից շարունակ ջուր էր գալիս, բերում էին fավօr խօճջանը կամ տrէխտանը՝ տրեխի թելը կամ ճէսկու՝ դօլաղի, սաղկի թելը և անց էին կացնում նրա բերանով։

Եթե երեխան փորացավ էր ընկնում, դօլինջ էին անում՝ տանում էին fավօrի մոտ։ Նա ոտքը դնում էր երեխայի փորի վրա, երեք անգամ տrէխտանի կօճակը՝ հանգույցը ետ էր անում, քանդում։

Լալկան երեխայի գլխատակ դնում էին նապաստակի ականջներ, ուղտի բուրդ, սատկած էշի կաշի կամ ենթադրելով, որ չար ոգին երեխային հանգիստ չի տալիս, մայրը պատռում էր նրա շորերը և դեն շպրտում, ասելով՝

«էս ա̈ քու փայըտ, տա՛ր»։

Ապա երկաթե շիշով օղակ էր գծում օրորոցի շուրջը և ղազիլ՝ այծի մազի պարան էր կապում օրորոցի լծին։

Եթե երեխան քուն չէր լինում, օձի շապիկ էին դնում գլխատակ[79]։

Ծննդկանը քառասուն օր համարվում էր անմաքուր։ Այդ պատճառով նա չպիտի ձեռք տար այն իրերին, որոնցից օգտվում էր ընտանիքը, և նրա ամանը պիտի առանձին պահվեր։ Արգելվում էր երևալ արևին կամ լուսնին, եթե նորածինը աղջիկ էր՝ երեք, իսկ եթե տղա՝ չորս շաբաթ։ Պատմում են, որ մի ծննդկան տեսնելով, որ հերթիկից արևի շողքը ընկել է իր զգեստի փեշի վրա, փեշը կտրել ու դեն է շպրտել թե՝ մէխկ ա̈։ Իսկ եթե ելնում էր դուրս, պիտի անցներ ստվեր տեղով, այն էլ շամփուրը կամ դաշույնը ձեռքին։ Նույնիսկ այն ժամանակ, երբ նա առաջին անգամ գնում էր աղբյուրից ջուր բերելու, պետք էր ձեռքն առներ մի շամփուր կամ որևէ պողպատե կտոր և ցորեն ու բրինձ թափեր աղբյուրի ակը՝ անշուշտ, որովհետև fաշկէrը բնակվում էին և աղբյուրների մեջ։ Արծվանիկում չէր կարելի մութն ընկնելուց հետո կամ մութ տեղում աղբյուրից կամ թասից ջուր խմել, որովհետև fաշկէrը կմտնեն բերանը։

Քառասունքը լրացրած կինն երեխան խտտած գնում էր հոր տունը երեխային ներկայացնելու։

Մոգական նշանակություն ուներ և այն արարողությունը, որը շաղկապված էր երեխայի առաջին ատամ ճաճելու ճետ։ Եփում էին կորկոտ և խառնում չամչի, ընկույզի և շաքարեղենի հետ։ Ապա հրավիրում էին մոտիկ ազ-

---

77 Բռնակոթում՝ Մըլքոնց և Բարսամանց տները։

78 Коклюш.

79 Արծվանիկ։